

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ
ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

ԱՐՇԱԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականությունը (այսուհետ՝ ԸԱՊԹ)¹ որպես Եվրոպական միության Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության (այսուհետ՝ ԸԱԱՔ) բաղկացուցիչ մաս, կարևոր դերակատարում ունի տարածաշրջանային խաղաղության և կայունության ապահովման գործում: ԸԱՊԹ դերն ու ներուժը տարածաշրջանային խաղաղության և կայունության ապահովման գործում բացահայտելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել դրա ձևավորման պատմական ընթացքը ու ներկառուցվածքային բաղադրատարրերը: Իրավական տեսանկյունից հիշատակելի են ԸԱՊԹ իրավապայմանագրային համակարգի և Եվրոպական անվտանգության ռազմավարության այն դրույթները, որոնք վերաբերում են տարածաշրջանային խաղաղության և կայունության ապահովմանը:

ԸԱՊԹ ձևավորումը մի ամբողջական գործընթաց է, որն արդյունք է աշխարհաքաղաքական մի շարք իրադարձությունների և ժամանակի մարտահրավերների: Դրա սկիզբ կարելի է համարել 1992 թ. հունիսին Բոննի մոտակայքում գտնվող «Պետերսբերգ» հյուրանոցում կայացած Արևմտաեվրոպական միության անդամ երկրների արտաքին գործերի և պաշտպանության նախարարների հանդիպման ժամանակ ընդունված Պետերսբերգի հռչակագիրը²: Վերջինս ընդգրկում էր, այսպես կոչվող, «Պետերսբերգյան խնդիրները», որով նախատեսվում է մարդասիրական և փրկարարական, խաղաղապահ, ինչպես նաև ճգնաժամային կառավարման՝ ներառյալ խաղաղաստեղծ գործողությունների իրականացում³:

Հետագայում Ամստերդամի պայմանագրով «Պետերսբերգյան խնդիրները» ինտեգրվեցին և դարձան Եվրոպական միության մասին պայմանագրի անբաժան մաս՝ հնարավորություն տալով ԵՄ անդամ բոլոր պետություններին՝ անկախ նրանց Արևմտաեվրոպական միությանն անդամակցելուց, մասնակցելու վերը նշված գործողությունների իրականացմանը⁴:

¹ ԸԱՊԹ-ն 1999-2009 թթ. կոչվում էր Եվրոպական անվտանգության և պաշտպանության քաղաքականություն: Անվանափոխումը կատարվել է Լիսաբոնի պայմանագրով:

² Տե՛ս **Henri De Waele**, «Layered Global Player: Legal Dynamics of EU External Relations», Springer-Verlag Berlin Heidelberg, 2011, էջ 48:

³ Տե՛ս «Petersberg Declaration», Western European Union Council of Ministers, Bonn, 19 June 1992:

⁴ Տե՛ս «Treaty on European Union», Maastricht, 7 February 1992, Article 17:

Լիսաբոնի պայմանագիրն իր հերթին համալրեց ԵՄ կողմից իրականացվող գործողությունների շրջանակը, որը նախատեսված էր «Պետերսբերգյան խնդիրներով»: Ըստ այդմ՝ վերը նշված գործողությունների շարքը համալրեցին հակամարտությունների կանխարգելումը, զինաթափմանն ուղղված համատեղ գործողությունները, ռազմական խորհրդատվությունը և աջակցող գործողությունները, ինչպես նաև հետկոնֆլիկտային կայունացմանն ուղղված գործողությունները⁵:

Ինչպես տեսնում ենք, «Պետերսբերգյան խնդիրներով» նախատեսված և Լիսաբոնի պայմանագրով ավելացված նոր գործողությունների շրջանակը միանշանակորեն ամրապնդում է ԸԱՊՔ հնարավորությունները և կարողությունները տարածաշրջանային խաղաղության և կայունության ապահովման գործում: Ներկայումս առկա գործողությունների շրջանակը ԵՄ-ին հնարավորություն է տալիս արդյունավետորեն միջամտելու տարածաշրջանային անվտանգության ցանկացած խնդրի՝ անկախ այն բանից, թե որ փուլում է այն գտնվում:

ԸԱՊՔ-ի ձևավորման գործընթացն ուսումնասիրելիս անհրաժեշտ է նաև անդրադառնալ Եվրոպական անվտանգության և պաշտպանության բաղադրիչին, որի ստեղծման մասին որոշումն ընդունվեց 1996 թ. Բեռլինում կայացած ՆԱՏՕ-ի արտաքին գործերի նախարարների հանդիպման ընթացքում: Վերջինս ԵՄ-ին հնարավորություն էր տալիս Արևմտեվրոպական միության միջոցով օգտագործելու ՆԱՏՕ-ի հնարավորությունները և ունակություններն իր սեփական նախաձեռնությամբ գործողություններ իրականացնելիս: Սակայն հետագա աշխարհաքաղաքական զարգացումները փոխեցին ԵՄ-ը պաշտպանության քաղաքականության զարգացման ուղին՝ թողնելով անցյալում Եվրոպական անվտանգության և պաշտպանության բաղադրիչը⁶:

Դեռևս 1992 թ. Մասստրիխտի պայմանագիրը, դնելով ԸԱՊՔ ձևավորման հիմքերը, նախատեսում էր համագործակցություն պաշտպանության հարցերում, որը, սակայն, կյանքի կոչվեց տարիներ անց: ԸԱՊՔ ձևավորման գործընթացի համար հետագա խթան դարձավ 1998 թ. դեկտեմբերի 3-4-ը Սեն Մալոյում կայացած գագաթնաժողովը, որն ազդարարեց Եվրոպական արտաքին քաղաքական համագործակցության նոր փուլի սկիզբ՝ ներառելով պաշտպանության քաղաքականությունը և ԵՄ-ը ռազմականացումը⁷: Գագաթնաժողովն ընդունեց ֆրանս-բրիտանական համատեղ հռչակագիրը, որով նախատեսվում էր ԵՄ-ին շնորհել այնպիսի կարգավիճակ, որ կարողանա լիարժեք դեր խաղալ միջազգային ասպարեզում՝ ունենալով ճգնաժամային իրավիճակներին արձագանքելու սեփական հնարավորություն՝ ներառյալ ռազմական ուժեր և անհրաժեշտ կառույցներ: Այս ամենի հետ մեկտեղ՝ նախատեսվում էր հարգել ԵՄ անդամ երկրների հարաբերությունները ՆԱՏՕ-ի հետ և չկրկնօրինակել վերջինին⁸:

⁵ Տե՛ս «Consolidated Version of the Treaty on European Union», Article 42.1 and Article 43.1:

⁶ Տե՛ս **Alina Kaczorowska** and **Joanne Coles**, *European Union Law*, 2008, p. 117:

⁷ Տե՛ս **Michelle Cini**, *European Union Politics*, 2007, p. 244:

⁸ Տե՛ս «Joint Declaration issued at the British-French Summit», Saint-Malo, France, 3-4 December 1998:

Մեկ տարի անց՝ 1999 թ. հունիսին, Քյոլնում կայացած Եվրոպական խորհրդի հանդիպման ժամանակ վերահաստատվեցին վերը նշված նախաձեռնությունները՝ Արևմտաեվրոպական միությունից ԵՄ-ին փոխանցելով որոշումների ընդունման պատասխանատվությունը և «Պետերսբերգյան խնդիրների» ամբողջ ծավալով գործողություններ իրականացնելու ունակությունը: Դրանով իսկ պաշտոնապես կյանքի կոչվեց ԸԱՊԹ⁹:

Այդ լիազորությունները գործնականում կիրառելու համար ԵՄ-ին անհրաժեշտ էին համապատասխան միջոցներ՝ ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական ոլորտներում: Դրանից ելնելով՝ 1999 թ. դեկտեմբերին Յեյթսնիկում կայացած Եվրոպական խորհրդի հանդիպման ժամանակ ռազմական ունակությունների վերաբերյալ ընդունվեցին մի շարք որոշումներ (Helsinki Headline Goal 2003), որոնցով, որպես առաջնային նպատակ, նախատեսվում էր մինչև 2003 թ. ստեղծել Արագ արձագանքման Եվրոպական ուժեր (European Rapid Reaction Force)՝ իրենց աջակցող համապատասխան կառույցներով: Արագ արձագանքման Եվրոպական ուժերը պետք է կազմված լինեին 50.000-60.000-անոց զորքից, որը պետք է ձևավորվեր 60 օրվա ընթացքում և պահպանվեր առնվազն մեկ տարի¹⁰:

Յետագայում անհրաժեշտություն առաջացավ զարգացնել և համակարգել ԵՄ-ը ռազմական ունակությունները՝ հստակեցնելով սահմանված նպատակները և պահանջները: Լիովին իրագործելով 2003 թ. համար նախատեսված ԵՄ-ը ռազմական ունակությունների վերաբերյալ նպատակները՝ 2004 թ. Բրյուսելում կայացած Եվրոպական խորհրդի հանդիպման ժամանակ հաստատվեցին նոր առաջնային նպատակներ՝ ուղղված ռազմական ճգնաժամերի կառավարման ունակություններին (Headline Goal 2010): Ըստ այդմ, նախատեսվում էր, որ մինչև 2010 թ. ԵՄ-ն պետք է կարողանա արագ և վճռական գործողություններով արձագանքել՝ Եվրոպական միության մասին պայմանագրով նախատեսված ճգնաժամերի կառավարմանն ուղղված գործառնությունների ողջ համալիրով¹¹:

Քաղաքացիական ոլորտում ԵՄ ունակությունների զարգացման սկիզբը դրվեց 2000 թ. հունիսին Ֆեիրայում կայացած Եվրոպական խորհրդի հանդիպման ժամանակ, երբ սահմանվեցին ԵՄ քաղաքացիական ունակությունների զարգացման չորս առաջնահերթ ուղղություններ՝ ոստիկանական, օրենքի գերակայության ամրապնդման, քաղաքացիական կառավարման ամրապնդման և քաղաքացիական պաշտպանության¹²: Եվրոպական խորհուրդը 2004 թ. դեկտեմբերին Բրյուսելում հաստատելով ԵՄ քաղաքացիական ունակությունների առաջնային նպատակ-

⁹ Տե՛ս «Presidency Conclusions of the Cologne European Council, Annex III, Presidency Report on Strengthening of the common European policy on security and defence», 3-4 June 1999:

¹⁰ Տե՛ս «Presidency Conclusions of the Helsinki European Council, Annex I to Annex IV, Presidency Progress Report to the Helsinki European Council on strengthening the common European policy on security and defence», 10-11 December 1999:

¹¹ Տե՛ս «Headline Goal 2010 approved by General Affairs and External Relations Council on 17 May 2004 and endorsed by the European Council of 17-18 June 2004»:

¹² Տե՛ս «Presidency Report on strengthening the Common European Security and Defence Policy, Annex I to the Presidency Conclusions», European Council, Santa Maria da Feira, 19-20 June 2000:

ները (Civilian Headline Goal 2008), որոնք պետք է կյանքի կոչվեին մինչ 2008 թ., ավելացրեց ևս երկու առաջնահերթ ուղղություն՝ դիտորդական առաքելություններ և ԵՄ-ը հատուկ ներկայացուցիչներին աջակցելը¹³: Այս վեց ուղղությունների շրջանակներում նախատեսվում էր, որ ԵՄ-ն պետք է ունենա ոստիկանական ուժեր, իրավական ոլորտի մասնագետներ, ինչպես նաև տարբեր բնագավառներից փորձագետներ¹⁴:

Սահմանված նպատակներին հասնելուց հետո՝ քաղաքացիական ճգնաժամերի կառավարման ունակությունները զարգացնելու և արդյունավետ դարձնելու համար 2007 թ. նոյեմբերին սահմանվեցին նոր առաջնային նպատակներ (Civilian Headline Goal 2010): Մասնավորապես նախատեսվում էր մինչև 2010 թ. քաղաքացիական ճգնաժամերի կառավարման ունակությունները հասցնել բարձր որակի՝ կարճ ժամանակում և բավարար քանակությամբ ապահովելով աջակցող գործառույթներով և անհրաժեշտ ամեն ինչով¹⁵:

Ռազմական և քաղաքացիական ունակությունների կանոնավոր զարգացման շնորհիվ ԸԱՊՔ-ն ձեռք բերեց անհրաժեշտ միջոցներ՝ ընդգծելով ԵՄ դերը միջազգային անվտանգության ապահովման գործում: Անհրաժեշտ է նշել, որ ԵՄ-ն փորձում է համաչափ զարգացնել իր ռազմական և քաղաքացիական ունակությունները, քանի որ հստակ գիտակցում է, որ ներկայումս առկա մարտահրավերները և տարածաշրջանային բնույթի խնդիրները պահանջում են երկակի մոտեցում: Ըստ այդմ, տարածաշրջանային խաղաղության և կայունության ապահովման գործում ԵՄ-ն կարող է հասնել դրական արդյունքի միայն ռազմական և քաղաքացիական ունակությունների փոխլրացման շնորհիվ:

ԸԱՊՔ շրջանակներում ԵՄ ռազմական և քաղաքացիական ունակությունների իրականացման գործում ներգրավված են մի շարք ԵՄ ինստիտուտներ և կառույցներ: Հիմնական դերակատարները նույն են, ինչ որ ԸԱԱՔ դեպքում: Սակայն կան մի շարք մարմիններ, որոնց գործառույթները սերտորեն առնչվում են ԸԱՊՔ-ի հետ՝ աջակցելով վերջինիս: ԸԱՊՔ մարմինների շարքում կարևոր դերակատարություն ունի ԵՄ խորհրդի ներկառուցվածքային բաղադրատարր հանդիսացող Քաղաքական և անվտանգության հարցերով կոմիտեն, որն առանցքային դեր է կատարում ԵՄ-ը կողմից ճգնաժամային իրավիճակներին արձագանքելու գործում¹⁶: Վերջինս նաև ԸԱԱՔ-ի շրջանակներում դիտարկում է միջազգային իրավիճակը, նպաստում արտաքին քաղաքական ուղղությունների ձևավորմանը և ԵՄ խորհրդի պահանջով կամ իր սեփական նախաձեռնությամբ ԵՄ խորհրդին տրամադրում եզրակացություններ¹⁷:

¹³ Տե՛ս «Civilian Headline Goal 2008, approved by the Brussels European Council on 17 December 2004»:

¹⁴ Տե՛ս **Federiga Bindi**, The Foreign Policy of the European Union: Assessing Europe's Role in the World, 2009, էջ 64-65:

¹⁵ Տե՛ս «Civilian Headline Goal 2010 approved by the ministerial Civilian Capabilities Improvement Conference and noted by the General Affairs and External Relations Council on 19 November 2007»:

¹⁶ Տե՛ս **Michael Merlingen** and **Rasa Ostrauskaite**, European Security and Defence Policy: An Implementation Perspective, 2008, էջ 18:

¹⁷ Տե՛ս «Treaty on European Union», Article 25, Maastricht, 7 February 1992:

ԸԱՊԹ-ին ռազմական խորհրդատվությամբ աջակցում է ԵՄ ռազմական կոմիտեն, որը ԵՄ խորհրդի հիմնադրած բարձրագույն ռազմական մարմինն է: Այն Քաղաքական և անվտանգության հարցերով կոմիտեին ապահովում է ռազմական խորհրդատվությամբ և հանդես է գալիս առաջարկություններով՝ ինչպես սեփական նախաձեռնությամբ, այնպես էլ վերջինիս պահանջով¹⁸: ԵՄ ռազմական գերատեսչությունների շարքում կարևոր է նաև ԵՄ ռազմական շտաբի դերը, որն իր գործունեությամբ օժանդակում է ԵՄ ռազմական կոմիտեին: ԵՄ ռազմական շտաբը կատարում է երեք հիմնական գործառույթներ՝ վաղ նախագուշացում, իրավիճակի գնահատում և ռազմավարական պլանավորում¹⁹: Իրենց խորհրդատվական գործառույթներով Քաղաքական և անվտանգության հարցերով կոմիտեին աջակցում են Ռազմաքաղաքական խումբը և ճգնաժամերի կառավարման քաղաքացիական հիմնահարցերով կոմիտեն: Երկուսն էլ կատարում են տեղեկատվական և խորհրդատվական գործառույթներ, ինչպես նաև հանդես են գալիս առաջարկությունների նախագծերով: Առաջինի գործունեության ոլորտը ներառում է ռազմաքաղաքական, իսկ երկրորդինը՝ ճգնաժամերի կառավարման քաղաքական հիմնահարցերը²⁰:

Լիսաբոնի պայմանագրով կատարված փոփոխությունների հետևանքով ասպարեզում ի հայտ եկավ նոր դերակատար՝ Արտաքին գործողությունների եվրոպական ծառայությունը²¹: Նորաստեղծ ծառայության մաս կազմեցին ԵՄ ռազմական շտաբը և ԵՄ համատեղ իրավիճակների կենտրոնը: Վերջինս ԵՄ գլխավոր հետախուզական մարմինն է և համակարգում է ազգային գաղտնի ծառայություններից ստացված տեղեկատվությունը:

ԸԱՊԹ մարմինների շարքում հատուկ նշանակություն ունի նաև Եվրոպական անվտանգության գործակալությունը: Վերջինս պաշտպանական ունակությունների զարգացման, ուսումնասիրության, ձեռքբերման և սպառազինման շրջանակներում իրականացնում է մի շարք գործառույթներ և բաց է իրեն անդամակցել ցանկացող ԵՄ անդամ բոլոր պետությունների համար²²:

ԸԱՊԹ-ն կառուցվածքային տեսանկյունից դիտարկելով՝ հասկանում ենք, որ վերջինիս ընդհանուր առմամբ օժանդակում և աջակցում են ԸԱԱԹ մի շարք դերակատարներ՝ ձևավորելով մարմինների յուրահատուկ ենթակառուցվածք: Դա բնական է, քանի որ ԸԱՊԹ-ն ԸԱԱԹ-ի բաղկացուցիչ մասն է:

ԸԱՊԹ-ն, զարգացնելով իր ռազմական և քաղաքացիական ունակությունները և կառույցները, ուներ ռազմավարության պակաս, բայց իրավիճակը փոխվեց, երբ 2003 թ. հունիսին Սալոնիկում կայացած Եվրոպական խորհրդի հանդիպման ժամանակ ԸԱԱԹ հարցերով բարձրագույն ներկայացուցիչ Խավիեր Սոլանան ներկայացրեց Եվրոպական անվտանգության ռազմավարությունը, որը վերապահումներով ընդունվեց նույն տարվա դեկտեմբերին²³:

¹⁸ Տե՛ս **Henri De Waele**, նշվ. աշխ., էջ 38:

¹⁹ Տե՛ս **Fraser Cameron**, An Introduction to European Foreign Policy, 2007, էջ 52:

²⁰ Տե՛ս **Roy H. Ginsberg** and **Susan E. Penksa**, The European Union in Global Security: The Politics of Impact, 2012, էջ 52:

²¹ Տե՛ս «Consolidated Version of the Treaty on European Union», Article 27.3:

²² Տե՛ս «Consolidated Version of the Treaty on European Union», Article 42.3 and Article 45:

²³ Տե՛ս **Emma J. Stewart**, European Union and Conflict Prevention: Policy Evolution and Outcome, 2006, էջ 61:

Եվրոպական անվտանգության ռազմավարությունը Եվրոպայում անվտանգության սպառնալիքներ է դիտում ահաբեկչությունը, զանգվածային ոչնչացման զենքերի տարածումը, տարածաշրջանային հակամարտությունները, պետական թերացումները և կազմակերպված հանցավորությունը: Եվրոպական անվտանգության ռազմավարությունը վերը նշված սպառնալիքներին դիմակայելու և անվտանգությունը ապահովելու համար սահմանում է մի շարք ռազմավարական նպատակներ: Վերջիններիս շարքում նշվում են սպառնալիքներին հակազդելը՝ հնարավորության դեպքում գործելով մինչև դրանց ի հայտ գալը, ԵՄ հարևանությամբ անվտանգության կառուցումը՝ ապահովելով հարևան տարածաշրջաններում խաղաղությունը և կայունությունը, ինչպես նաև բազմակողմանիության հիման վրա միջազգային կարգի հետևողական զարգացումը, որը ներառում է միջազգային ուժեղ հասարակության ձևավորում, արդյունավետ գործող միջազգային կառույցներ և իրավունքի գերակայության վրա հիմնված միջազգային հարաբերություններ: Եվրոպական անվտանգության ռազմավարությունը սահմանում է նաև այն գործողությունների շրջանակը, որոնց միջոցով ԵՄ-ն առավել լավ կիրականացնի իր անվտանգության քաղաքականությունը: Ըստ այդմ՝ նախատեսվում է, որ ԵՄ-ն պետք է ակտիվորեն հետամուտ լինի իր ռազմավարական նպատակների իրականացմանը, ընդլայնի սեփական ունակությունների շրջանակը, վարի հետևողական քաղաքականություն և համագործակցի գործընկերների հետ²⁴:

Այս համատեքստում նշանակալից է 2008 թ. դեկտեմբերին Բրյուսելում Եվրոպական խորհրդի կողմից հաստատված զեկույցը, որը վերաբերում է Եվրոպական անվտանգության ռազմավարության իրականացմանը: Անհրաժեշտ է նշել, որ վերջինս չի փոխարինում 2003-ին ընդունված Եվրոպական անվտանգության ռազմավարությանը, այլ ամրապնդում է այն՝ տալով հնարավորություն տեսնելու, թե գործնականում ինչ է արվել, և ինչ կարելի է անել ռազմավարության հետագա իրականացումը բարելավելու համար: Ձեկույցում նշվում է, որ Եվրոպական անվտանգության ռազմավարության ընդունումից անցել է ընդամենը հինգ տարի, և որ ներկայումս ԵՄ-ն ունի ավելի շատ պարտականություններ, քան երբևէ իր պատմության ընթացքում: Ձեկույցը ԵՄ անվտանգության հիմնական սպառնալիքների և մարտահրավերների շարքում հավելում է կիբեր անվտանգությունը, էներգետիկ անվտանգությունը, կլիմայի փոփոխությունը, անվտանգության և զարգացման հիմնախնդիրները, ծովահենությունը, ինչպես նաև թեթև զենքի և փոքր սպառազինությունների տարածումը²⁵:

2010 թ. փետրվարին ասպարեզ եկավ ռազմավարության նոր ձևաչափ՝ ԵՄ ներքին անվտանգության ռազմավարությունը, որը նույն տարվա մարտին արժանացավ Եվրոպական խորհրդի հավանությանը: Վերջինս սահմանում է հիմնախնդիրներ, սկզբունքներ և ուղենիշներ, որոնք վերա-

²⁴ Տե՛ս «A Secure Europe in a Better World: European Security Strategy, Approved by the European Council held in Brussels on 12 December 2003 and drafted under the responsibilities of the EU High Representative Javier SOLANA»:

²⁵ Տե՛ս «Report on the Implementation of the European Security Strategy: Providing Security in a Changing World, Approved by the European Council held in Brussels on 11 and 12 December 2008 and drafted under the responsibilities of the EU High Representative Javier Solana»:

բերում են այնպիսի անվտանգության սպառնալիքներին, ինչպիսիք են կազմակերպված հանցավորությունը, ահաբեկչությունը, բնական ու տեխնածին աղետները և այլն²⁶:

Հետագայում Եվրոպական հանձնաժողովն ընդունեց ռազմավարական հինգ նպատակ՝ յուրաքանչյուրի համար սահմանելով հատուկ գործողություններ, որոնց միջոցով պետք է իրականացվի ԵՄ ներքին անվտանգության ռազմավարությունը 2011-2014 թվականներին²⁷:

Լրացնելով ռազմավարության պակասը՝ ԸԱՊՔ-ն ունեցավ նշանակալի ձեռքբերումներ. սահմանեց անվտանգության հիմնական սպառնալիքները և դրանց դիմակայելու անհրաժեշտ միջոցները՝ ժամանակին համահունչ զարգացնելով և ամրապնդելով դրանք: Բացի այդ, Եվրոպական անվտանգության ռազմավարությունն իր բովանդակությամբ մեկ անգամ ևս ընդգծեց ԵՄ-ի դերը տարածաշրջանային խաղաղության և կայունության ապահովման գործում՝ ընդգրկելով համապատասխան նպատակներ և գործողություններ: Այս համատեքստում հատկանշական են տարածաշրջանային հակամարտությունները որպես անվտանգության սպառնալիք դիտարկելը և ԵՄ հարևանությամբ անվտանգության կառուցումը որպես ռազմավարական առաջնահերթ նպատակ սահմանելը: Վերջիններս Եվրոպական անվտանգության ռազմավարության այն հիմնական առանցքային տարրերն են, որոնք ամբողջովին ուղղված են տարածաշրջանային խաղաղության և կայունության ապահովմանը:

Գործնականում ԸԱՊՔ արդյունավետության մասին են վկայում դրա շրջանակներում իրականացվող առաքելությունները: Վերջին ութ տարիներին ԸԱՊՔ-ն նախաձեռնել է 24 առաքելություններ և գործողություններ՝ ներգրավելով 80.000-անոց անձնակազմ²⁸: Ներկայումս դրանցից գործում են 13-ը՝ 3 ռազմական գործողություններ և 10 քաղաքացիական բնույթի առաքելություններ, իսկ մյուս 11-ը՝ 4 ռազմական գործողությունները և 7 քաղաքացիական բնույթի առաքելություններն, ավարտվել են վերջին տարիներին: ԸԱՊՔ առաքելությունները սովորաբար իրականացվում են ՄԱԿ-ի մանդատի հիման վրա կամ ընդունող պետության համաձայնությամբ²⁹: ԸԱՊՔ առաքելությունների աշխարհաքաղաքականությունը բավականին լայն է և ընդգրկում է ԵՄ հարևանությամբ գտնվող գրեթե բոլոր տարածաշրջանները: Անկախ ԸԱՊՔ առաքելությունների բնույթից և տեսակից՝ դրանք ընդհանուր առմամբ ուղղված են տարածաշրջանային խաղաղության և կայունության հաստատմանն ու ապահովմանը: Հարավային Կովկասի պետություններից միայն Վրաստանում են իրականացվել ԸԱՊՔ առաքելություններ: Մինչ օրս իրականացվել են օրենքի գերակայության, սահմանային վերահսկողության և դիտորդական առաքելություններ:

²⁶ Տե՛ս «Internal Security Strategy for the European Union: Towards a European Security Model», endorsed by the European Council held in Brussels on 25-26 March 2010:

²⁷ Տե՛ս «The EU Internal Security Strategy in Action: Five steps towards a more secure Europe», Communication from the Commission to the European Parliament and the Council of 22 November 2010:

²⁸ Տե՛ս «Council conclusions on Common Security and Defence Policy», 3130th FOREIGN AFFAIRS Council meeting Brussels, 1 December 2011:

²⁹ Տե՛ս Derek E. Mix, The European Union: Foreign and Security Policy, Analyst in European Affairs, Congressional Research Service, 15 August 2011, էջ 11:

Այսպիսով, ուսումնասիրելով ԸԱՊՔ անցած ձևավորման ճանապարհը, որը շարունակվում է մինչ օրս՝ ընդգրկելով արդի մարտահրավերների դեմ պայքարը, ԸԱՊՔ ռազմական և քաղաքացիական ունակությունների փուլ առ փուլ ձևավորումը և սեփական բազմաբնագավառ ռազմավարությունը, հասկանում ենք, որ ԸԱՊՔ՝ որպես տարածաշրջանային խաղաղության և կայունության ապահովման բաղադրիչ, ի վիճակի է արձագանքելու ցանկացած մարտահրավերի: Թերևս ԸԱՊՔ ձևավորումը նախագծված էր վաղուց, սակայն վերջինս մեկ տասնամյակում հասցրեց ձեռք բերել անհրաժեշտ ունակություններ և զբաղեցնել իր ուրույն տեղը միջազգային անվտանգության ապահովման գործում: ԸԱՊՔ շնորհիվ ԵՄ-ն միջազգային ասպարեզում դարձել է միջազգային անվտանգության համար պատասխանատու դերակատարներից մեկը՝ ժամանակին համընթաց զարգացնելով իր ունակությունները և ընդլայնելով իր պատասխանատվության շրջանակը:

АРШАК АЙРАПЕТЯН – Договорно-правовая система общей политики безопасности и обороны Европейского Союза в контексте обеспечения регионального мира и стабильности. – В статье проанализированы роль и потенциал общей политики безопасности и обороны (ОПБО) в деле обеспечения регионального мира и стабильности. ОПБО рассматривается как эффективный инструмент при решении этих задач. Прослежено развитие ОПБО, военные и гражданские возможности вовлечённых в неё ключевых исполнителей и институтов, относящиеся к региональной безопасности аспекты европейской стратегии безопасности. Делается вывод, что ОПБО – наиважнейший компонент ЕС, без которого региональные мир и стабильность недостижимы.

ARSHAK HAYRAPETYAN – Legal and Treaty System of Common Security and Defence Policy of European Union in the Context of Ensuring Regional Peace and Stability. - The article reviews the role and potential of Common Security and Defence Policy (CSDP) in ensuring regional peace and stability. After researching the historical development process of CSDP, the development of EU military and civilian capabilities under the CSDP, the key factors and institutions involved in CSDP and the guidelines of European Security Strategy according regional security the author aims to introduce CSDP as a tool for ensuring regional peace and stability. The article also analyzes productivity of CSDP in establishing regional peace and stability. Finally the research proves that CSDP is the most significant component of EU in ensuring regional peace and stability.